



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<21>> Մայիսի 2024թ.

N ՄՈ/154 -Ա

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ  
ՄԻՔԱՅԵԼ ՎԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանի 2024 թվականի մարտի 20-ի դիմումը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2024 թվականի ապրիլի 8-ից 19-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Միքայել Վանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Պավել Մկրտչյանին:
3. Միքայել Վանյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի ապրիլի 22-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-03-21 10:05 GMT+4  
Հավաստված է ՀԵՏԻՊԿԻ Ուղևոր

ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ